## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

✻ 1 Սեպ. Բշ. — Ս. Աստուածածնի Վերափոխման տօնի մեռելոցի առթիւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան։ Յաւարտ Ս. Պատարագի, Նախագահութեամբ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր կատարուեցան մասնաւոր հոգեհանգստեան պաշտօններ՝ հանգուցեալ Տ. Գէորգ Վրդ. Ճանըզեանի համար, անոր մահուան քառասունքին առթիւ, ինչպէս նաեւ զանազան խնդրամատոյց ազգայնոց ննջեցելոց։ Ս. Պատարագի միջոցին «Տէր ողորմեա»էն առաջ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան արտասանեց օրուան ծանուցումը դրուատելով հանգուցեալ Տ. Գէորգ Վրդ. Ճանըզեանի երկարամեայ հաւատարիմ պաշտօնավարութիւնը։

✻ 3 Սեպ. Դշ. — Կէսօրէ առաջ, Նորին Ս. Օծութիւն Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը Բեթղեհէմի Ս. Ծննդեան Տաճարը մեկնեցաւ Հոգեշնորհ Հայրերու առաջնորդութեամբ եւ «Հրաշափառ»ով Ս. Ծննդեան Այրը իջնելով՝ իր ուխտն ու երկրպագութիւնը կատարեց Ս. Ծննդեան տեղւոյն եւ Ս. Մսուրին առջեւ եւ ապա այցելելով Տաճարի միւս սրբավայրերը վերադարձաւ Ս. Աթոռ իր հետեւորդներով։

✻ 4 Սեպ. Եշ. — Երեկոյին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Պելճիքայի Վսեմ. Ընդհ. Հիւպատոսի պաշտօնական ընդունելութեան։

✻ 7 Սեպ. Կիր. — Ը. օր Վերափոխման. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան «Երաշխաւոր» Ս. Աստուածածնի սեղանին վրայ, ըստ սովորութեան։ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյեան պաշտամունքին ի Ս. Յակոբ, եւ նախագահեց նախատօնակին։

✻ 8 Սեպ. Բշ. — Թ. օր Վերափոխման. Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյեան պաշտամունքին ի Ս. Յակոբ, եւ նախագահեց նախատօնակին։

✻ 9 Սեպ. Գշ. — Տօն Սրբոց Յովակիմայ եւ Աննայի։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին ի Ս. Յակոբ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Աստուածածնայ տաճարի Հայր Յովսէփի գերեզմանի սեղանին վրայ։

✻ 13 Սեպ. Շբ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյեան պաշտամունքին ի Ս. Յակոբ, եւ նախագահեց նախատօնակին։

✻ 14 Սեպ. Կիր. — Տօն Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի. Ամեն. Ս. Պատրիարք Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին ի Ս. Յակոբ, եւ Ս. Պատարագին ի Ս. Աստուածածին։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան։

✻ 16 Սեպ. Գշ. — Գերյարգելի Տօքթ. Կարլ Հէրման Վօս՝ քարտուղար Church Peace Unionի եւ իր տիկինը կէսօրէ առաջ այցելութիւն տուին Ամեն. Ս. Պատրիարք Հօր։ Ընդունուեցան սրահին մէջ պատուասիրութեամբ եւ ունեցան կէս ժամուայ տեսակցութիւն իրենց առաքելութեան մասին։

✻ 18 Սեպ. Եշ. — Երեկոյեան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Պաղեստինի Բարձր Գոմիսէրի Վսեմ. Փոխանորդի պաշտօնական ընդունելութեան Բարձր Գոմիսէրի ապարանքին մէջ։

✻ 20 Սեպ. Շբ. — Տօն Նիկիոյ Ս. Ժողովոյն, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին ի Ս. Յակոբ, եւ նախագահեց Մանկունքի յատուկ պաշտամունքին։ Ներկայ գտնուեցաւ նոյնպէս երեկոյեան պաշտամունքին եւ նախագահեց նախատօնակին։

✻ 21 Սեպ. Կիր. — Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ. Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին ի Ս. Յակոբ։ Յաւարտ պաշտամունքին, ժամը 8ին պաշտօնական երթով՝ ինքնաշարժերով՝ ընկերակցութեամբ Հոգեշնորհ Հայրերու եւ Միաբանութեան Ս. Աստուածածնի տաճար գնաց եւ «Հրաշափառ»ով մուտք գործեց. Ներկայ եղաւ Ս. Պատարագին՝ զոր մատոյց Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան։ Զկնի Ս. Պատարագին Ս. Պատրիարք Հայրը վերադարձաւ Ս. Աթոռ, ընկերակցութեամբ Հոգեշնորհ Հայրերու։

✻ 27 Սեպ. Շբ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյեան պաշտամունքին եւ նախագահեց վաղուան Խաչվերացի նախատօնակին ու գիշերային «Հսկումի» պաշտամունքին։

✻ 28 Սեպ. Կիր. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց առաւօտեան պաշտամունքին եւ Ս. Պատարագը մատոյց Աւագ Սեղանին վրայ, եւ քարոզեց բնաբան ունենալով Գաղ. Թղթ. Զ. 14 համարը։ — Յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Ս. Աթոռոյ բարերարաց Մելքոնեան եղբարց Գրիգորի եւ Կարապետի հոգւոյ համար։ — Երեկոյին կատարուեցաւ Խաչվերացի հանդիսաւոր Թափօրը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

— Այս առաւօտ, Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը ցաւով տեղեկացաւ թէ Լատինաց՝ Պաղեստինի, Անդր-Յորդանանի եւ Կիպրոսի պատրիարք Ամեն. Տ. Լուի Պարլասինա իր մահկանացուն կնքած է երէկ երեկոյեան ժամը 7-ին, իր բնակարանին մէջ։ Հանգուցեալ պատրիարքը ծնած էր ի Թուրին, 1871-ին, քահանայական ձեռնադրութիւն ստացած՝ 22 տարեկան հասակին մէջ, իսկ 40 տարեկանին Թեմական պաշտօնի կոչուած Հռոմի մէջ։ Պաղեստին ղրկուած է 1918-ին, եւ պատրիարք նշանակուած՝ 1920-ին։

✻ 29 Սեպ. Բշ. — Խաչվերացի մեռելոցի Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Փրկիչ, պատարագիչն էր Հոգ. Տ. Յարութիւն Արղ. Մուշեան։ — Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցան հոգեհանգստեան պաշտօն խնդրամատոյց ազգայնոց ննջեցելոց համար։

— Առաւօտեան ժամը 10-ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեանի, ներկայ գտնուեցաւ Լատինաց հանգուցեալ պատրիարքի համար Մայր Տաճարի մէջ մատուցուած Ս. Պատարագին եւ հոգեհանգստեան պաշտօնին։ Ս. Պատարագը մատոյց Երուսաղէմի Ֆրանչիսկեանց Գիւստոսը եւ նախագահեց հոգեհանգստեան արարողութեան։ Հանգց. պատրիարքի գրաւոր փափաքին համաձայն, իր մարմինը պիտի ամփոփուի պատրիարքարանի տաճարի Ս. Կոյսի Սեղանին առջեւ։

digitised by A.R.A.R.@